



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3670

Г. Дыра,

Л. р - 1911р.

491.99-

L-61

491.542-8

Լ-61

ԼՈՒՍԱԲԵՐ

Գրաւոր Վարժութիւններ

Ա. ՏԱՐԻ

2002

260



2010

1.99-8
- 61

ԼՈՒՍԱԲԵՐ


ԳՐԱԻՈՐ

Ա. ՏԱՐԻ

Պատկեր և շարադրեր, լեզուական ձևերու և ասոյրներու,
բառագիտութեան և ուղղագրութեան գրաւոր կենդանի վարժութիւններ:

Կազմեցին

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑԵԱՆ և ԼԵՒՈՆ ՍԵՂՈՍԵԱՆ



092 3/4 39

00000



1. ԱՌՏՈՒՆ, ԻՐԻԿՈՒՆԸ

Արևը երբ կը ծագի :
Արևը երբ մայր կը մտնէ :
Տղաքը երբ կ'երթան դպրոց :
Եւ երբ կը դառնան դպրոցէն :

2. ԾՈՅԼ ՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՐ

Վերի պատկերին մէջ տղաքը ո՞ւր կ'երթան :
Ի՞նչ տեսակ տղան դպրոց երթալը կը սիրէ :
Իսկ ո՞վ կու լայ , թէ՛ դպրոց չեմ երթար :

* 3. ԲԱՐԵՒ


Իրար հանդիպելու ատեն կ'ըսենք .
— Բարև : — Աստծու բարին :
— Բարի լոյս : — Աստծու բարին :
— Բարի իրիկուն : — Աստծու բարին :
Իրարմէ բաժնուելու ատեն կ'ըսենք .
— Մ'նաս բարով : — Երթաս բարով :
— Գիշեր բարի : — Լոյս բարի :
— Ցտեսութիւն : — Ցտեսութիւն :

4. ՀԱՆԳԻՊԵԼՈՒ ԱՏԵՆ

Առտուն կանուխ, երբ իրար տեսնենք ի՞նչ կ'ըսենք :
Իրիկունը ինչ կ'ըսենք :
Ուրիշ ամեն ատեն ի՞նչ կ'ըսենք :
Մեզի բարև տուողին ի՞նչ կը պատասխանենք :

5. ԲՍԺՆՈՒԵԼՈՒ ԱՏԵՆ

Ե՛րբ կ'ըսենք՝ մնաս բարով :
Գիշերը երբ իրարմէ բաժնուինք սովորաբար ի՞նչ կ'ըսենք :
Մնաս բարով ըսողին ի՞նչ կը պատասխանենք :
— Յտեսու՛թիւն : — (Պատասխանի՛ք :)



6. ԱՆՕԹԻ ԳԱՅԼԸ

Կովը իր հորթուկին հետ կ'արածէր անտառին մօտիկ :
Կովը ծառերուն ետևն էր ու չէր երևար : Հեռուէն եկաւ
անօթի (ի՛նչ) մը, ուզեց յարձակուի (որո՛ւն) վրայ :
Յանկարծ (ս'վ) դուրս նետուեցաւ (ինչե՛րո՛ւն) ետևէն և կո-
տոջները դէմ ըրաւ (որո՛ւն) : Կովի սուր (ինչե՛րը) գայլը որ
տեսաւ, փախաւ, մտաւ (ս'ւր) և կորաւ :

* 7. ԶՈՐՔՈՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Զորքոտանի կենդանիներ են արջը, շունը, գայլը, այծը,
ձին, եզը, վագրը, առիւծը, եղջերուն, գոմէշը, աղուէսը, էշը,
մուկը, կատուն, կովը, խոզը, ոչխարը, նապաստակը :

8. ԸՏԱՆԻ ՌԻ ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ


Ընտանի կենդանիները կ'ապրին մեզի հետ ու մեզի կը
ծառայեն :
Ընտանի են՝ (գոսկ՝ վերի չորհոսանիներէն) :
Վայրենի կենդանիները կ'ապրին ազատ ու մեզմէ կը
փախչին :
Վայրենի են՝ (գոսկ՝ վերի չորհոսանիներէն) :

9. ՆՄԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Շանը շատ նման է ո՞ր կենդանին :
Շունը ի՞նչ տեսակ կենդանի է, գայլը ինչ տեսակ կեն-
դանի է :
Ձիու նման է ո՞ր կենդանին :
Այդ երկուքն ալ ի՞նչ տեսակ կենդանի են : Ինչէ՞ն գիտես :
Վագրը շատ նման է ո՞ր կենդանիին :
Այս երկուքէն ո՞րն է վայրենի : Ինչէ՞ն գիտես :

10. ԲՈՒՍԱԿԵՐ ՈՒ ՄՍԱԿԵՐ

Խոտ, պտուղ, տերև, արմատ ուտող կենդանիներուն
կ'ըսենք . . . :
Բուսակեր են՝ (գոսկ՝ վերի չորհոսանիներէն) :
Ուրիշ կենդանիներու միսը ուտող կենդանիին կ'ըսենք . . . :
Մսակեր են՝ (գոսկ՝ վերի չորհոսանիներէն) :
Մարդը խոտակեր է, թէ՛ մսակեր :



11. ՍԱԳԵՐԸ

— Մայրիկ, ես կ'երթամ (գրե՛ վայրենի կենդանի մը) որսալու. — ըսաւ Տիգրանը հպարտ-հպարտ, առաւ իր նեան ու ազեղը ու ելաւ դաշտը :

Ճամբան պատահեցաւ (ինչե՞րո՞ւ. նայե՛ պատկեր) : Անոնք վիզերնին երկրնցուցին ու քր՛ս-քր՛ս ըրին : (Որո՞ւ) լեզին պատուեցաւ, (ի՞նչն ու ինչը) նետեց ձեռքէն գետին ու վազեց տուն :

— Մայրիկ, մայրիկ, ինձի կերան (որո՞ւմ) :

12. ՏԻԳՐԱՆԻՆ ԳԴԱԿԸ

Տիգրանը տունէն գլխաբաց էր դուրս եկեր, թէ՛ գզակով : Բայց ինչպէ՞ս տուն վերադարձաւ :

Փախչելու ատեն գզակը գլխէն ուր էր ինկեր :

Այսպէսով գզակը ուր մնաց, իր ինչերո՞ւն քովիկը :

13. ԳԼՆԱԲԱՅ, ԲՈՌԻԿ, ՇԱՊԿԱՆՅ ՈՒ ՄԵՐԿ (ՏԿԼՈՐ)

Տղան հանեց գլխարկը ու մնաց . . . :

Հանեց կոշիկն ու գուլպան ու մնաց . . . :

Հանեց վերին հագուստները ու մնաց . . . :

Վերջն ալ հանեց շապիկն ու վարտիքը ու մնաց . . . :

Նետուեցաւ գետը ու լողացաւ :

8

14. ՄԵՐ ՀԱՐԵԻԱՆԻ ԲԱԿԸ

Մեր հարեանի բակը շատ կայ հաւ, բադ, սագ, հնդկահաւ և աղաւնի :

Պառաւը առտու իրիկուն կ'ելնէ կուտ տալու : Եւ ամէն կողմէն անոր վրայ կը թափին հաւերը, (եւ ուրիշ որո՞ւմ) :

15. ՀԱԻԿԻԹ, ՄԻՍ, ՓԵՏՈՒՐ

Հաւը, սագը, բադը ընտանի՞ թռչուն են, թէ՛ վայրենի :

Ընտանի թռչունները տան ո՞ր մասը կ'ապրին :

Անոնք մեզի ի՞նչ կ'ածեն :

Հաւկիթէն դատ անոնց ի՞նչը կ'ուտենք :

Իսկ ինչէ՞ն կը շինենք մեզի համար փափուկ բարձեր :

* 16. ԱՄԷՆ ԿԵՆԴԱՆԻ ԻՐ ԶԱՅՆԸ ՈՒՆԻ


Մէկը կը կանչէ, միւսը կը հաչէ,
 մէկը կը կշկշայ, միւսը կը խրինջայ
 աս կը մոնչէ, ան կը բառաչէ,
 մէկը կը տոգայ, մէկը կը բոգայ,
 աս կը կռկռայ, ան կը ճոճոայ,
 մէկը կը գոայ, միւսը կը մայէ,
 աս ալ կը ծւայ, կամ կը մլաւէ,
 կամ կը մկրկայ, կ'ոռնայ կամ կ'երգէ :

17.

Ճանճը կը տոգայ, իսկ աքլորը . . . :
 Մեղուն կը բոգայ, իսկ գորտը . . . :
 Ճպուռը կը ճոճոայ, իսկ սոխակը . . . :
 Առիւծը կը մոնչէ, իսկ գայլը . . . :

18.

Ո՞վ կը հաչէ : Ո՞վ կը մլաւէ : Ո՞վ կը խրինջայ : Ո՞վ կը բառաչէ : Ո՞վ կը մայէ : Ո՞վ կը գոայ : Ո՞վ կը մկրկայ : Ո՞վ կը կշկշայ : Ո՞վ կը ծւայ : Իսկ ո՞վ կը խօսի :





19. ԱՆԿՈՋ ՇԻՒՐԸ

Լևոնենց տան առջևը պարտէզ մը կայ: Պարտէզին մէջ շատ փոքրիկ տնակ մը: Այդ տնակին մէջ կը բնակի իրենց (ի՞նչը):
 Լևոնիկը իջաւ (ն՝ւր) խաղալու, մօտեցաւ շան (ի՞նչի՞ն), տեսաւ (ն՝վ) հոն չէ:
 Ըսաւ՝ եկ՛ւր հիւր երթամ մեր շնիկին տունը, որ գայ՝ շատ պիտի զարմանայ: Ըսաւ ու (ի՞նչ քաւ):
 Քիչ ետքը շունը եկաւ, նայեցաւ ու շատ (ի՞նչ եղաւ): Իսկ (ն՝վ) բոլոր սրտովը կը խնդար:

20. ԼԱԿԻ ԱՄԱՆԸ, ԿԱՊԵԼՈՒ ԵՂՔԱՆ ՈՒ ՎՋԻ ՕՂԱԿԸ

Տնակին քովը ի՞նչ է գրած:
 Շան կերակուրին ի՞նչ կ'ըսեն:
 Իսկ տնակի միւս կողմը ի՞նչ է կախուած ցիցէն:
 Այդ շղթան ինչո՞ւ համար է:
 Շղթան շան ո՞ւրտեղէն կ'անցրնեն:

Օր մը խոհարարը աման մը ի՞նչ տուաւ կատուին լակելու:
 Ո՞վ է աւելի ուժով, շունը թէ՞ կատուն:
 Շունը գլխովը անդին հրեց կատուն ու ինքը ի՞նչ ըրաւ:
 Այսպէսով ո՞վ մնաց անօթի ու տխուր ձայնով ի՞նչ կ'ընէր:



✓ 22. ԿՏՈՐ ՄԸ ՄԻՍ


Միւս օրը խոհարարը (ի՞նչ) նետէց շանը:
 Շունը կ'ուզէր վերցնէ, մէջ մըն ալ յանկարծ վրայ ինկաւ (ն՝վ), խլեց միտը ու բարձրացաւ (ն՝ւր):
 Հոն ճիւղի մը վրայ նստեցաւ ու սկսաւ (ի՞նչ քնել):
 Իսկ (ն՝վ) վեր-վեր կը ցատկէր, (ն՝վ) կը գառնար ծառին շուրջը և բարկացած ձայնով (ի՞նչ կ'ընէր):
 (Ի՞նչի՞) հոտն ալ այնպէս անուշ կու գար (եւ ո՞ւրիկէ):

23. ԵՂՈՒՆԿ ՈՒ ՃԱՆԿ

Շան թաթիկներուն ծայրը ի՞նչ էլայ :
 Կատուի սուր եզունկներուն ի՞նչ կ'ըսենք :
 Ինչո՞ւ շունը ծառ բարձրանալ չի կրնար :
 Շունը ի՞ր ինչո՞վը յաղթեց :
 Կատուն ինչովը յաղթեց :

✓ 24. ԼԵՋՈՒ, ԵՐԹՈՒՆՔ

Մենք շուրը կը խմենք, իսկ շունը (ի՞նչ կ'ըսեն) :
 Մենք կը խմենք շրթունքներով, իսկ կատուն (ի՞նչո՞վ) :
 Լեզուով խմելուն ի՞նչ կ'ըսենք :



25. ԹՈՉՆԱԿՆ ՈՒ ՎԱՆԴԱԿԸ

Սեղանի վրայ ի՞նչ էր դրած : Ի՞նչ կար անոր մէջ :
 Ո՞վ կ'երգէր ուրախ-ուրախ բաց պատուհանին դէմը :
 Յանկարծ ի՞նչ ներս մտաւ ուրկէ՞ :
 Անոնցմէ մէկը ո՞ւր նստեցաւ : Իսկ միւսը ի՞նչ բանի չորս
 դին կը դառնար :
 Թոչնակը վախէն ի՞նչը ընդհատեց :
 Բայց իսկոյն եկաւ տան տիկինը ու կատուները ի՞նչ
 ըրաւ : Օխան, ի՞նչ լաւ եղաւ :

✓ 26. ՆՈՐ ԹՄԲՈՒԿԸ

Պետրոսը 7 տարեկան մըն է : Այսօր ան




մը նուէր ստացաւ : Կախեց



-էն

ու մտաւ բակ :



-ով ամուր կը գարնէր, թո՛ւմ-

պում-պում, թո՛ւմ-պում-պում :



-ը վախէն

թափեցան շուրը,



-ը թռաւ



-ին վրայ,



-ը մտան



-ին ետևը,



-ը

տեղէն ելաւ, իսկ



-ը կը վազէր անոր ետևէն

ու կը հաչէր :

✓ 27. ԻՍ ԴԱՍԵՐՍ

Ես այս տարի մեր դպրոցի առաջին դասարանն եմ:
Կը սորվիմ՝ հայերէն, թուաբանութիւն, իրագիտութիւն,
պատմութիւններ, երգ ու նկարչութիւն:

✓ 28. ԴՊՐՈՅԱԿԱՆ ՊԻՅՈՅՔՆԵՐ

Կարգալ-գրելու, հաշուելու ու նկարելու համար պէտք է
գիրք, թուղթ, մատիտ, գրիչ, ծայր, մելան, ծծուն, քանակ,
ռետին, գունաւոր մատիտներ, ներկ ու վրձին:

Այս դպրոցական պիտոյքներէն դուն ո՞րը ունիս:

29. ԻՆՁԸ ԻՆՁԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ դպրոցական պիտոյք է պէտք կարգալու համար:

Ի՞նչ է պէտք գրելու համար:

Ի՞նչ է պէտք պարզ նկարչութեան համար:

Ի՞նչ է պէտք գունաւոր նկարելու համար:

30. ԿԱՂԱՍՏԱՐ

Ինչի՞ վրայ կը գրենք մելանով: Մելան գործածելու ատեն
ինչո՞վ կը գրենք: Գրչի ո՞ր մասը կը թաթխենք մելանի մէջ:
Ինչի՞ մէջ կը պահենք մելանը:

* 31. ՄԵԼԱՆԻ ՇԵՏ ՄԻ ԽԱՂԱՐ

Կաղամարդը խորունկ չըլլայ, իսկ բերանը լայն թող ըլլայ,
որ գրիչդ մաքուր մնայ:

Գուն ինքդ ալ գրիչը շատ վարէն մի՛ բռներ ու երբեք
մելանի հետ մի՛ խաղար, որ մատներդ չը կեղտոտին, մատ-
ներուդ հետն ալ երեսդ ու հագուստներդ:

491.542

պ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ՈՒՍՈՒՑՁԻՆ

Թէ՛ շարագրութեան, թէ՛ լեզուի և թէ՛ ուղղագրութեան տեսակէտէն
ճիշտ ու վարժ գրել կարողանալու համար՝ տղան պէտք է ունենայ արտայայ-
տութեան պատրաստ ձեւեր աչքին, ականջին ու մասններուն մէջ միանգամայն:
Ինչքան մեծ ու կենդանի է պատրաստ ֆորմիւլներու այդ պաշարը, այնքան
աղատ ակր է տղան իր լեզուին: Եւ ճիշտ ատոր համար ալ լեզուի ուսուցման
առաջին տարիներուն մէջ գրել սորվելու ամենէն գլխաւոր միջոցը արձագրու-
թիւնն է:

Բայց սովորական եղող անմիջական պարզ արտագրութիւնը շատ է մե-
քենական, անհոգի ու անգրաւիչ, տեսակ մը արտանկարչութիւն, որով և ան-
պրատու: Պէտք է արտագրելու այն տեսակ եղանակ մը, որ միտժամանակ տղու
միտքը զբաղեցնէ, դիտողութեան ու դատողութեան ալ նիւթ տայ, աշխա-
տանքին վրայէն վերցնէ կրաւորականութեան ու մեքենականութեան կնիքը
և աշակերտին տայ այն թանկագին զգացումը, թէ ի՞նչն է որ կը մտածէ,
ի՞նչն է որ կ'արտայայտէ, ի՞նչն է որ կը շարագրէ: Ահա՛ հոս կը ձգտի և
մեր այս գրքովը:

Յաջորդ երեսներուն մէջ դրուած վարժութիւնները հինգ տեսակ են:

Մէկ-երկու յօդուած պարզ ընթերցման համար է միայն, որ յաջորդ
վարժութիւններու մէջ շահագործուի: Պէտք է դասարանին մէջ անգամ մը-երկու
կարդացնել տալ և անցնել յաջորդին: Այս յօդուածներու վերնագրին առջեւը
ատողանիչ մը կայ դրուած:

Մէկ-երկու կտոր ալ պարզ արտագրութիւն է, նորէն իրրեւ նիւթ յա-
ջորդ յօդուածներուն մէջ շահագործուելու համար: Նախ՝ դասարանին մէջ
անգամ մը-երկու պէտք է կարդացնել տալ. վերջը ամեն մէկ աշակերտ կ'ար-
տագրէ ինքնիրենը: Պէտք է պահանջուի, որ գրելու ատեն միշտ սովորութիւն
ընեն արտասանելու իրենց գրածը, գոնէ՛ կրտսծայն, գոնէ՛ չրթունքները շարժելով:

Յօդուածներէն քանի մը հասն ալ պատկերազարդ է. այսինքն գիր ու
պատկեր իրարու հիւսուած: Նախ՝ դասարանին մէջ պէտք է կարդացնել ու
պատկերներուն տեղը բառերը գնել տալ: Վերջը պատուիրել, որ արտագրեն,
պատկերներուն տեղը բառերը գնելով: Պատկերներուն զրութիւնը երեսին
տակը դրուած է. գրելէ առաջ պէտք է դիտեն ու ստուգեն:

Մնացած յօդուածներու մէկ մասը պղտիկ շարագրութիւններ են կամ
վարժութիւններ, որոնց մէջ բայց թողած տեղեր կան և որ տղան ինչն է լրա-
ցնելու: Նախ՝ դասարանի մէջ պէտք է անգամ մը կարդացուի ու լրացուի:

Անկէ ետքը սղան կ'արտադրէ ամբողջը՝ լրացնելիքը լրացնելով: Իր աւելցուցած բառերուն գրութիւնը պէտք է նախապէս ճշտէ և ստուգէ, որ չլլայ թէ սխալ գրէ: Այդ բառերը անպատճառ գործածուած են կա՛մ անմիջապէս նախորդ տողերուն մէջ, կա՛մ նախորդ վարժութեան:

Յօդուածներու մեծագոյն մասը հարչեր են, որոնց պատասխանելու է տղան յնուելով իր դատողութեանը, իր դիտողութեանը կամ նոյն էջի վրայ դրուած պատկերին: Նախ՝ դատարանին մէջ հարչ-հարչ պէտք է կարդայնել և պատասխանները ստանալ: Վերջը պատուիրել, որ ամեն մէկը կարդայ նոյնը հարչ-հարչ իրեն համար, սոյ պատասխանը ու գրէ: Գրուել պիտի միայն պատասխանը, հարչը արտագրելու կարիք չը կայ: Ատոր փոխարէն գրուելիք պատասխանը պէտք է լլայ լրիւ, ամբողջ հարչը պատասխանին մէջ կրկնուած պիտի լլայ կարելի եղածին չափ անխփփոխ: (Օրինակ մը. «Կարելու ատեն ի՞նչ կը դնեն, որ մատը չը ծակի»): — Պէտք չէ թողնուի, որ պատասխանն «Մասնոց» կամ «Մասնոց կը դնեն» կամ «Կարելու ատեն մասնոց կը դնեն», այլ անպատճառ լրիւ՝ «Կարելու ատեն մասնոց կը դնեն, որ մատը չը ծակի»):

Այս Գրաւորի յօդուածները կազմուած են մեր Ընթերցարանի յօդուածներու ներքին նիւթին զուգահեռական, բայց ինքնին այնքան անկախ ու ամբողջական, որ կրնան ազատ կերպով գործածուիլ ամեն ընթերցարանի հետ զուգընթաց:

Գուցէ աւելորդ չլլայ շեշտելը, որ բացի այս վարժութիւններէն, որոնք աշակերտներու աւելի ինքնուրոյն, աւելի դուրսի, աւելի ալ հիմնական աշխատանքն են կազմելու, աշակերտները ունենալու են նաև մէջէմէջ ուրիշ գրաւոր աշխատութիւններ ուսուցչի հետ միասին. մէկ կողմէն թելադրութիւնը, գլխաւորապէս ուղղագրութեան քանի մը օրէնքները սորվեցնելու նպատակով, միւս կողմէն ալ բանաւոր ու գրաւոր շարադրութիւններ մանուկներու անձնական ու աւօրեայ կեանքէն առած նիւթերով:

Այս բոլորի մասին մանրամասն խօսուելու է «Լուսարեւրի Առաջին տարուան Ուղեցոյցին» մէջ:

«ԼՈՒՍԱՐԵՐ»ի շարքէն արդէն լոյս են տեսած.

- 1. ԼՈՒՍԱՐԵՐ, Այրեհարան, 64 էրես, բազմաթիւ պատկեր ու ձեւագիր:
- 2. ԼՈՒՍԱՐԵՐ, Ընթերցարան, Ա. սարի, 80 էրես, պատկերազարդ:
- 3. ԼՈՒՍԱՐԵՐ, Գրաւոր, Ա. սարի, 48 էրես, շարադրական պատկերներով:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է՝

- 4. ԼՈՒՍԱՐԵՐԻ Ուղեցոյցը, Այրեհարանի համար. Գրել-կարդալ սորվեցնելու եղանակը:

✓ 32. ԿԱԻՒՃ ԵՒ ՍՊՈՒՆԿ

Թուղթի վրայ կը գրենք (ինչո՞վ), ուղիղ գիծ կը քաշենք (ինչո՞վ) ու կը շնջենք (ինչո՞վ):

Գրատախտակի վրայ կը գրենք (ինչո՞վ) ու կը շնջենք (ինչո՞վ):

✓ 33. ԳՐԱՍՈՒՓ ՈՒ ՊԱՅՈՒՍԱԿ

Ինչի՞ մէջ կը պահենք գրիչը, ռետինը, ծայրերը: Ինչի՞ մէջ կը պահենք գրքերը, տետրակները, գրչատուփը:

✓ 34. ԿԱՐՈՒ ԶԵՒ

Դպրոցը աղջիկները կը սորվին նաև (ի՞նչ): Մկրատով կը ձևեն, իսկ ասեղ-թելով (ի՞նչ կ'ընեն): Կարելու ատեն (ի՞նչ) կը դնեն, որ մատը չը ծակի:

35. ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԵԱԿ

Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը:

✓ 36, ՔԱՆԻ՞

Ձեռքը քանի՞ մատ ունի: Երկու ձեռքի վրայ քանի՞ մատ կայ: Քանի՞ ու քանի կ'ընէ երկու: Երկու հատ երեքը քանի՞ կ'ընէ: Վեցի մէջ երեքը քանի՞ անգամ կայ: Աթոռը քանի՞ ոտք ունի: Շաբաթը քանի՞ օր ունի: Երկու հատ չորսը քանի՞ կ'ընէ: Տասնէն որ մէկը հանեմ քանի՞ կը մնայ: Երեք հատ երեքը քանի՞ կ'ընէ:

37, ԶՈՅԳ ՈՒ ԿԵՆՏ

Առաջին տասնեակին մէջ որո՞նք են զոյգ թիւերը: Առաջին տասնեակին մէջ որո՞նք են կենտ թիւերը:



38. ՔԱԼԵԼ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԵՆ

Այս պզտիկ տղան (բանի՞) տարու է: Դեռ (ի՞նչ ընել) չի կրնար: Մայրն ու քոյրը կ'ուզեն (ի՞նչ ընեն): (և՛վ է) բռնեք անոր թևերը, որ օգնէ: (Ո՛վ է) կեցեր անոր դէմը, որ բռնէ: — Եկ՛ուր, աղբարիկ, եկ՛ուր. շատ դիւրին բան է քալելը, մի՛ վախնար. — այսպէս սիրտ կու տար (ո՛վ): Եւ աղբարիկը քալել կը փորձէ, տանտիս, տանտիս:

✓ 39. ԲՈՁԻԼ, ՍՈՂԱԼ, ԼՈՂԱԼ, ՅԱՏԿԵԼ

Մարդը կը քայլէ: Ճնճղուկը ... : Զուկը ... : Թիթեռնիկը ... : Օձը ... : Ճպուռը ... : Որդը ... : Ճանճը ... : Բազը ... : Գորաը ... :

✓ 40. ՍԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ ՈՒ ԳՈՐԳԻՆ ՎՐԱՅ

Սփռոցը ինչի՞ վրայ է փռած: Մամավարն ու ջուրի փարջը ո՞ւր են դրած: Թէյամանը ուր է դրած:

Գետինը ի՞նչ է փռած: Խաղալիք նապաստակը ու պզտիկ աթոռը ո՞ւր են ինկած: Մայրն ու փոքրիկը ինչի՞ վրայ են կեցած:

✓ 41. ԳԻՒՂԱՅԻ ՏՂԱՅ ՄԸ

Ահա՛ ձեզի հագուած-սրուած գիւղացի տղայ մը:

Հագեր է (ի՞նչ ու ի՞նչ), մէջքը կապեր է (ի՞նչ), գլուխը դրեր է (ի՞նչ), վրայէն փաթթեր է (ի՞նչը), ոտքերուն հագեր է (ի՞նչ), սրունքներուն փաթթեր է (ի՞նչ) և ձեռքն ալ բռնեք է (ի՞նչ) մը:



Գօտի, շալւար, բանկոն, քոլոգ, փուշի, չիբուխ, սաղք, սոլ:

1008
36036



✓ 42. ԳԻՒՂԱՅԻ ԱՂՋԻԿ ՄԸ

Աս ալ գիւղի աղջիկ է:

Հագեր է (ի՞նչ), վրայէն կապեր է (ի՞նչ), գլխուն նետեր է (ի՞նչ), ոտքին (ի՞նչեր) ունի, ձեռքը առեր է (ի՞նչ) մը և կ'երթայ (ի՞նչ) բերու:



Մաշիկներ, գեզոց, շրջագետ, բանկոն, թաշկինակ, դոլ:



✓ 43. ՁԻՆ, ՁԻՆԷ ՄԱՐԴ, ՁԻՆԱԳՆԴԻ

Առջի գիշերը առատ (ի՞նչ) էր եկեր : Տղաքը հաւաքու-
ուեր էին դպրոցին բակը ու (ի՞նչ) կը խաղային :

Բակի մէջտեղը (ի՞նչ) մըն էին շիներ, ձեռքը (ի՞նչ) էին
տուեր, գլուխը (ի՞նչ) էին անցուցեր ու բերանն ալ (ի՞նչ) մը :
Իրենք ալ քաշուեր էին ետ ու նշան կ'առնէին. աս փո-
րին, աս գլխուն, աս գլխուն վրայի (ի՞նչի՞նչ) : Խեղճ ձիւնէ մարդ :

44. ԳԼԽԱՐԿ, ԳԴԱԿ, ՏԷՍ

Ձիւնէ մարդու գլուխը ի՞նչ են ացուցեր, ինչի՞ տեղ :

Փափուկ և անեղբրք գլխարկին ի՞նչ կ'ըսենք :

Տղաքը գլուխնին ի՞նչ էին զրեր, զգա՞հ, թէ գլխարկ :

Հայրիկդ ի՞նչ կը դնէ : Դուն ինչ կը դնես :

45. ՏԱԲԱՍ, ՎԵՐԱՐԿՈՒ

Գիւղացին շալար կը հագնի, իսկ քաղաքացին ...

Ձմեռը հագուստներուն վրայէն ի՞նչ կը հագնինք : Ինչո՞ւ :

Ձիւնագնդի խաղցող աղաքը գիւղացի՞ են, թէ քաղաքացի :

Դուն ինչ ես :

46. ՔՕՏ, ԿՕՏԻԿ, ՄԱՇԻԿ

Գիւղացին ոտքը սոյ կը հագնի կամ տրեխ, իսկ քաղա-
քացին ...

Մինչև ծունկերը համաող երկար կօշիկներուն ի՞նչ կ'ըսենք :


Կօշիկը կը հագնինք դուրսը, իսկ մաշիկը (փապուճ) ... :

Այս ոտնամաններէն որո՞նք կրունկ չունին :

✓ 47. ԻՄ ՇԱԳՈՒՍՏ

(Նկարագրէ՛ վրայիդ հագուստը : Կը գրես հետեւեալ կերպով.

Ես գլուխս ... կը դնեմ : Վրաս կը հագնիմ ... : Շարունակի՛) :



48. ԱՐՓԻԿԻ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ

Արփիկը շատ կը սիրէ իր (ինչե՞րը) : Ամեն իրիկուն (իր ի՞նչ
ընելէն) առաջ բոլորը կարգով կը շարէ մահճակալի երկաթ-

ներուն. իր մեծ փիղը, ճերմակ արջը, այն մեծ գլխով առիւծի
նման շնիկը : Շատ ծիծաղելի է մանաւանդ մարդուկը, որուն

(որ տեղը) եթէ սեղմես, (ինչե՞տ'վր) ծափ կու տայ :

Բայց Արփիկը ամենէն աւելի կը սիրէ իր պղտիկ սև ար-
ջուկը, անպատճառ ծոցը կ'առնէ ու այնպէս կը քնանայ :

Անուշ քուն (որո՞ւն) և իր (ինչե՞տ'ուն) :

Մահճակալի ո՞ր կողմն են դրուած փիղն ու ճերմակ արջուկը :
 Մահճակալի ո՞ր կողմն են դրուած շունն ու մարդուկը :
 Պատկերին մէջ մարդուկը ամբողջ կ'երևայ. ո՞ր է մնացեր մէկ մասը :

✓ 50. ԲԱՐՁ, ՎԵՐՄԱԿ, ՍԱԻԱՆ

Քնանալու ատեն ինչո՞վ կը ծածկուինք :
 Անկողնի ո՞ր կտորն է, որ շուտ-շուտ կը լուանք :
 Ինչո՞ւ բարձին ու վերմակին երես կը քաշենք :

✓ 51. ԱՂԲԻՒՐԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Խեղճ աղջիկ : Կուժը առեր էր կ'երթար (ս'ւր), (ի՞նչ) բերելու : Յանկարծ (ի՞նչը) սահեցաւ ուսէն, ինկաւ ու (ի՞նչ եղաւ) :

Հիմա կեցեր է ու (ի՞նչ կ'ընէ) : Մի լար, աղջիկ, բան չը կայ, կը պատահի : Հապա . իզուր չէ որ ըսեր են՝ ջրի կուժը աղբիւրի ճամբան կը կտորի :

52. ԿՈՒԺ ԿԱՄ ԾԻՇ, ԲԱԺԱԿ ԿԱՄ ՔԱՍ

Ձուրը ինչի՞ մէջ կը պահենք :
 Ձուրը ինչո՞վ կը խմենք :

✓ 53. ԴԱՆԱԿ, ԴԳՍԼ, ՊԱՏԱՌԱՔԱՂ, ՊՆԱԿ

Ձրալի ու մանր-հատիկ կերակուրները ինչո՞վ կ'ուտենք :
 Միւս կերակուրները ինչո՞վ բերան կը տանինք :
 Եթէ կտորը մեծ է նախ ի՞նչ կ'ընենք, ինչո՞վ, ինչի՞ մէջ :



Պտուղները ինչպէ՞ս կ'ուտենք, հո՞ւմ թէ եփած :
 Բանջարեղէնը ընդհանրապէս ինչպէս կ'ուտենք :
 Մի՞սը ինչպէս կ'ուտենք :
 Ձուն ու կաթը հո՞ւմ կ'ուտենք թէ եփած :

55. ԽԱՇԵԼ, ԽՈՐՈՎԵԼ, ՏԱՊԱԿԵԼ

Ջրի մէջ եփելուն ի՞նչ կ'ըսենք :
 Իւղի մէջ եփելուն ի՞նչ կ'ըսենք :
 Ուղղակի կրակի վրայ եփելուն ի՞նչ կ'ըսենք :

56. ԿԱՅԱՅ ՈՒ ՊՏՈՒԿ, ՏԱՊԱԿ ՈՒ ՍԱՆ, ԵԱՄՓՈՒՐ ՈՒ ԿԱՍԿԱՐԱ

Կերակուրը կ'եփենք կամ (ի՞նչի՞) մէջ կամ (ի՞նչի՞) :
 Կերակուրը կը տապկենք կամ (ի՞նչի՞) մէջ կամ (ի՞նչի՞) :
 Ուտելիքը կը խորովենք կամ (ի՞նչի՞) վրայ կամ (ի՞նչի՞) :
 Կերակուրը կը խառնենք շերեփով, իսկ քամիչով (ի՞նչ կ'ընենք) :

57. ՄՐՃԱՍԱՆ, ՅԷՏԱՍԱՆ ՈՒ ՍԱՄԱՆԱՐ

Սուրճը ի՞նչի մէջ կ'եփենք :
 Սամաւարի մէջ ի՞նչ կ'եռացնենք ի՞նչի համար :
 Թէյը ինչի՞ մէջ կը պատրաստենք :
 Թէյամանը ո՞ր կը դնենք, որ տաք մնայ :

58. ՄՍԵՂԵՆ

Պառաւը հոս ի՞նչ բանի է :
 Իւղի մէջ եփած մսին ի՞նչ կ'ըսենք :
 Շամփուրի կամ կասկաշայի վրայ եփած մսին ի՞նչ կ'ըսենք :
 Խաշու ի՞նչին կ'ըսենք :



Գոհարիկը ժիր



մըն է : Առտուն ելածին պէս



Տները կարգի կը բերէ, յատակը



-ով

կը մաքրէ,



-ի ու



-ու

փողին

կ'առնէ : ճաշի ժամանակ



-ը կը սրբէ,



-ը,



-ը,



-ը

կը շարէ

ու սեղանը կը պատրաստէ :

Հրաշալի ալ



կ'ընէ, կը կարկտէ, իր դասերէն ու



-էն


ալ ետ չի մնար :

Գոհարիկը իմ աջ



-ս

է՛ կը գովէ մայրիկը :



60. Զ Ի Ո Ի Ս Ա Ն Ձ

Քոյր ու եղբայր (ի՞նչ) կը խաղան : (Ո՞վ) եղեր է ձի և (ն՞վ) եղեր է վարողը :

Պարանը նետեր է եղբօրը մէջքը, (ի՞նչ բանի) տեղ, բայց հազիւ կը սանձէ իր ձիւն, որ խենթ-խենթ (ի՞նչ կ'ընէ) և փախչել կ'ուզէ քոյրը ձեռքէն :

Շնիկն ալ չարացած կը հաչէ այդ խենթ ձիուն վրայ :

61. Ն Ո Ր Զ Ի Ա Վ Ա Ր


(Գրե՛ միեւնոյն պատմութիւնը, միայն քոյր սեղ վարողը եղբայրը ըլլայ, իսկ եղբօր սեղ ձին քոյրը ըլլայ :)

62. Շ Ա Բ Ա Ք Մ Ե

Շաբաթը եօթը օր ունի. երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի :

Շաբաթուան վեց օրը կ'աշխատինք և մէկ օրը կը հանգրստանանք :

Կ'աշխատինք (ն՞ր) օրերը, կը հանգստանանք (ն՞ր) օրը :



63. ՅՈՒՆԻԿԻ ԲԱՂՆԻՔԸ

Մամիկը նոր լողցուց իր (իճշը) :
 Հիմա առեր է գիրկը, իր (ինչեո՞ւն) վրայ, փաթթեր է սրբի-
 չին մէջը ու (իճշ կ'ընէ) անոր մարմինը :
 Իսկ կատուն պոչը տնկեր է, կեցեր է (նւր), կը նայի ու
 կարծես կ'ըսէ .
 «Բաղնիքդ անուշ, բաղնիքդ անուշ» :

64. ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ առողջ բան է լողանալը :
 Ի՞նչ գեղեցիկ բան է մաքուր ըլլալը :
 Ի՞նչ ախորժելի է մարմինդ մաքուր զգալը :
 Ամենէն զգուելի բանը կեղտոտութիւնն է :
 Մաքուր եղիր :

65. ՏԱՇՏ, ՏԱՔ ԶՈՒՐ, ՕՃԱՌ

Շաբաթը քանի՞ անգամ կը լողանաս : Քեզի ո՞վ կը լող-
 ցընէ : Ո՞ւր կը լողցընէ, տո՞ւնը թէ բաղնիքը : Տունը ինչի
 մէջ կը լողանաս : Ինչո՞վ կը լողանաս :

66. ԼՈՂԱԼ ԿԱՄ ԼՈՂ ՏԱԼ

Լող տալ գիտե՞ս : Չեր մօտերը ծով կամ լիճ կայ : Ի՞նչ է
 ձեր գետի անունը : Ո՞րն է աւելի դժուար՝ վազող ջրի մէջ
 լողալը թէ՞ ծովի : Ինչո՞ւ, վազող ջուրը ի՞նչ կ'ընէ :

* 67. ԼՈՒԱ՝ ՈՒ ԼՈՒԱՅՈՒՔ՝

Ամեն առտու լաւ մը լուացուէ ու սանրուէ : Լուան երե-
 սրդ, քիթ ու բերանդ, աչքերդ, ախանջներդ, վիզդ :
 Օրուան մէջ քանի մը անգամ լուան ձեռքերդ, մանաւանդ
 հաց ուտելէ առաջ :
 Ամեն իրիկուն լուան բերանդ ու ախանջներդ անկողին
 մտնելէդ առաջ. և լուան պզտիկ խոզանակով : Կ'ուներնաս ա-
 ոողջ ու գեղեցիկ ախանջներ ու չես ուներնար ախայի ցաւ :

68.

Մարմնի այս կամ այն մասը շուրով մաքրելուն ի՞նչ
 կ'ըսենք :
 Միայն ձեռքն ու երեսը լուարուն ի՞նչ կ'ըսենք :
 Ամբողջ մարմնով լուացուելուն ի՞նչ կ'ըսենք :
 Իսկ ջրի մէջ ձեռքով-ոտքով առաջ շարժուելուն ի՞նչ
 կ'ըսենք :

69. ԲԱՋՏՈՅ, ՊԱՅԱՐԱՆ ՈՒ ՍՆՏՈՒԿ, ԿՐԱԿԱՐԱՆ ՈՒ ՎԱՌԱՐԱՆ

Մամը ինչի՞ վրայ է նստած իր թոռնիկը չորցընելու համար :
 Տաշտը ինչի՞ վրայ է դրած, որ բարձր ըլլայ :
 Մաւանը, սրբիչը և միւս ձերմակեղէնները ո՞ւր կը պահենք :
 Չմեռը սենեակը ինչո՞վ կը տաքցնենք :


Մեր դպրոցը քարաշէն է :
 Ո՞վ է դրեր անոր հիմն ու պատերը :
 Ով է շիներ առաստաղն ու յատակները :
 Դպրոցի ուրիշ ինչերն է շիներ հիւանդ :
 Մենք ուրիշ ներս կը մտնենք :
 Լո՞յսը ուրիշ կը մտնէ ներս :

71. ՄԵՐ ՏՈՒՆԸ

Իսկ ձեր տունը քարաշէն է, հողաշէն թէ փայտաշէն :
 Կառուրը հողո՞վ է ծածկուած, կրամիտով (կղմի՞ն. որ)
 թէ թիթեղով :
 Ձեր տան առջեւը բակ կամ պարտէզ կայ, թէ ոչինչ
 չը կայ :
 Ձեր տունը քանի սենեակ ունի :
 Խոհանոցը ինչո՞ւ համար է :
 Մառանը ինչու համար է :

72. ՆՆՋԱՐԱՆ, ՍԵՂԱՆԱՏՈՒՆ, ՇԻՐԱՍԵՆԵԱԿ

Ի՞նչ կ'ըսենք այն սենեակին, ուր հաց կ'ուտենք :
 Ննջարանը ո՞ր սենեակն է :
 Հիւրերը ո՞ր կ'ընդունինք :
 Մենք ուրիշ սենեակ մըն ալ ունինք, որ կ'անուանենք
 «Հայրիկի սենեակը» : Հայրիկը հոն կը քաշուի ի՞նչ ընելու
 համար :
 Իսկ դուք ասոնցմէ զատ ուրիշ սենեակ ունի՞ք, որո՞ւն
 սենեակն է, ինչո՞ւ համար է :



73. ԼՈՒՍՅՔ

Ահա երկու ընկերուհի, որ իրար շատ կը սիրեն ու միշտ
 միասին են :
 Հիմա ալ եկեր են (ի՞նչ) կը խաղան :
 Դրեր են մէջտեղ մէյմէկ ցածրիկ փայտէ (ի՞նչ) : Վրան ալ
 մէյմէկ պզտիկ լուացքի (ի՞նչ) : Վեր են սոթթեր (ինչե՞րնի՞ն) ու կը
 լուան իրենց տիկնիկի (ինչե՞ղի՞նք) : Կը լուան ու լուացածը
 (ի՞նչ կ'ընեն) պարանին վրայ, որ (ի՞նչ բլայ) :

74. ԶՈՒՐ

Լուացքը ինչո՞վ կ'ընենք : Զուրը ուրիշ ինչի՞ կը գործածենք :
 Միայն մարդն է, որ ջուր կը գործածէ : Հապա նաև ո՞վ :
 Կենդանիներն ու բոյսերը ջուրը ինչի՞ կը գործածեն :
 Առանց ջուրի կարելի՞ է ապրիլ :

75. ԱՆՋԲԵՒ, ԱՂԲԻՐ, ԳԵՏ

Խմելու ջուրը ո՞վ կու տայ մեզի :
 Լուացքի ու լուացուելու ջուրը ո՞վ կուտայ մեզի :
 Ծառ ու ծաղիկ ջրելու ջուրը ո՞վ կուտայ մեզի :
 Այս երեքէն ո՞րը կու գայ ամպերէն, ո՞րը կու գայ սա-
 րերէն և ո՞րը կու գայ գետնի տակերէն :



-ը աման է, իսկ



-ը... :



-ը խաղալիք է, իսկ



-ը... :



-ը դասական պիտոյք է,



-ը... :



-ը կարասի է, իսկ



-ը... :



-ը հագուստ է, իսկ



-ը... :



-ը փոխնորդ է, իսկ



-ը... :



-ը ոտնաման է, իսկ



-ն... :

ԿճՈՆԸ, կաղամար, գիրք, պահարան, տրեխ, կոշիկ, գուլպայ, մուշտակ, հոլ վեգ, վարտիք, բաժակ, աթոռ, բաճկոն :

Ձմեռը ցուրտ է, ամառը... :

Ձմեռը ցերեկը կարճ է, գիշերը երկար :

Ամառը ցերեկը խնչպէ՞ս է, գիշերը խնչպէ՞ս :

Տարուայ ո՞ր ժամանակը ամեն բան կը ծլի ու կը ծնի :

Տարուայ ո՞ր ժամանակը ամեն բան կը թոռմի ու կը գոցուի :

Ե՞րբ կը ցանեն ցորենը, գարին և միւս հացահատիկները :

Ե՞րբ կը հնձեն ցորենը, գարին և միւս հացահատիկները :

Արագիլը, ծիծեռնակը և միւս չուող թռչունները ե՞րբ կու գան մեր աշխարհը :

Արագիլը, ծիծեռնակը և միւս չուող թռչունները ե՞րբ կը հեռանան մեր աշխարհէն, դէպի ո՞ւր :

Գիտե՞ս տարուան տասներկու ամիսներուն անունները : Ահա՛.

Յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր :

Որո՞նք են գարնան ամիսները :

Որո՞նք են ամառուան ամիսները :

Որո՞նք են աշնան ամիսները :

Որո՞նք են ձմեռուան ամիսները :

Դուն ո՞ր ամսուն մտար զպրոց :
Ո՞ր ամսուն դասերը կը վերջանան :
Ո՞ր ամիսներուն է ամառուան արձակուրդը :
Տարին ո՞ր ամսուն կ'ըսկսի և ո՞ր ամսուն կը վերջանայ :
Քրիստոսի ծնունդը ո՞ր ամսուն է :
Դինն որ ամսուն ես ծնուած :

82. ԳՈՅՆԵՐԸ

Ամենէն շատ պատահող գոյներն են՝
կարմիր, կանաչ, դեղին, կապոյտ, սև, ճերմակ, գորշ :

83. ԻՆՁԻ ՊԷՍ

Ձիւնի պէս ճերմակ : Ածուխի պէս ... : Արեան պէս ... :
Խոտի պէս... : Մոխիրի պէս... : Երկնքի պէս... : Ոսկիի պէս... :

84. ԻՆՁԸ ԻՆՁԻ ՊԷՍ

Կաթը ճերմակ է ձիւնի պէս : Հասկը (ի՞նչ է ինչի՞ պէս) :
Կակաչը ... : Վարունկը ... : Ագռաւը ... : Աւազը ... : Ծովը ... :

85.

Ամենէն շատ ո՞ր գոյնը կը սիրես :
Ո՞ր գոյները չես սիրեր :
Մութի մէջ ամեն բան ի՞նչ գոյն ունի :
Ձեր դասարանի պատերը ի՞նչ գոյնի են :

Մալորը ամենէն առաջ կանաչ գոյն կ'առնէ՝ կը կանաչի, ետքը
կարմիր գոյն կ'առնէ՝ կը կարմրի, երբեմն դեղին գոյն կ'առնէ՝
կը դեղնի, ուրիշ անգամ ալ կապոյտ գոյն կ'առնէ՝ կը կապտի :
Երբ բան մը սև գոյնով ներկեմ կը սևնայ, երբ ճերմակ
գոյնով ներկեմ կը ճերմկի, իսկ երբ սևի վրայ ճերմակ խառ-
նեմ կը դառնայ գորշ՝ կը գորշանայ :

87.


Մարդս բարկութենէն կը դեղնի, իսկ ամօթէն ... :
Կեռասը երբ հասուննայ կը կարմրի, իսկ սերկևիլը ... :
Խոտն ու տերևը գարնան կը կանաչին, իսկ աշնան ... :
Ծուխէն օձախը ի՞նչ կ'ըլլայ :
Ծեծուած տեղը մարմինը ի՞նչ կ'ըլլայ :
Ծերութենէն մարդու մազերը ի՞նչ կ'ըլլան :
Անձրևէն առաջ երկինքը ի՞նչ կ'ըլլայ :

88. ԲԱՆՁԱՐ ԾԱԽՈՂ ԽԷՁՈՆ

Փողոցէ փողոց կը շրջի Խէչօն իր պառաւ ձիու սանձէն
բռնած. խոպոտ ձայնով կը պուռայ, կը գովէ իր բանջարե-
ղէնները :
Տներուն դռները կը բացուին և ամեն կողմէ կը գնեն
կաղամբ ու գազար, բազուկ ու շաղգամ, աղցան ու բամբակ,
բատրիճան ու սպանաղ, տոմատ ու գետնախինձոր :
Եւ ուրախ-ուրախ կը դառնայ Խէչօն իր բանջարանոցը
պարապ կողովներով :

89. ԱՐՄԱՏ, ՏԵՐԵԻ ԵՒ ՊՏՈՒՂ

Մենք կ'ուտենք կանաչեղէնի (ո՞ր ու ո՞ր մասերը) :
(Խէչօի ծախսած բանջարներէն որո՞նց) արմատը կ'ուտենք :
(Անոր ծախսած բանջարներէն որո՞նց) տերևը կ'ուտենք :
(Անոր ծախսած բանջարներէն որո՞նց) պտուղը կ'ուտենք :



90. ՔԱՐՄ ԽՈՏ

Վահանի հայրիկը կառապան է: Եւ վահանը իր պատիկութենէն (իճի) հետ է մեծցած:

Մանաւանդ իրենց մեծ (իճ զոյնի) ձին վահանը շատ կը սիրէ:

Անոր (իճը) միշտ ինքը կու տայ, իր ձեռքովը:

Ա՛յ, հիմա ալ (իճ) է բերեր անոր համար:

Ի՛նչ անուշ հոտ ունի և ինչպէս ալ համով է նոր քաղած խոտը:

Եւ ինչպէս ուլ ախ ես (ո՛վ եւ ո՛վ):

91. ԱԽՈՒ, ԳՈՄ, ՇԱԽԱԲՈՒՆ

Մարդիկ ի՛նչ կը շինեն իրենք մէջը բնակելու համար:

Իրենց ձիուն համար ինչ կը շինեն:

Իսկ տաւարի՞ համար ինչ կը շինեն:

Հաւերու համար շինուած անակին ի՛նչ կ'ըսենք:

92. ԱՐՇԵՍՆԵՐ

Կառապանը կառք կը վարէ, իսկ գերձակը...:

Երկրագործը հողը կը մշակէ, իսկ որմնաղիբը...:

Բրուտը հողէ ամաններ կը շինէ, իսկ խոհարարը...:

Ածխագործը ածուխ կը պատրաստէ, իսկ կօշկակարը...:

Դարբինը երկաթէն գործիքներ կը շինէ, իսկ հիւսնը...:

93. ՓԱՅՏ, ԵՐԿԱՅ, ԿԱԻ

Ո՛վ կը շինէ գամը, պայտը, կացինը, ուրագը, մուրճը:

Ան այս բոլորը ինչէ՞ն կը շինէ:

Ո՛վ կը շինէ սեղանը, նստարանը, տակաուր, պահարանը:

Ան այս բոլորը ինչէ՞ն կը շինէ:

Ո՛վ կը շինէ պտուկը, կուժը, կարասը:

Ան այս բոլորը ինչէ՞ն կը շինէ:

94. ՎԱՅԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Իսկ վաճառականը ի՛նչ կը շինէ կամ ի՛նչ կը մշակէ, թէ՞ ոչինչ չի շիներ, ոչինչ չի մշակեր:

Անոր ծախած ապրանքները ի՞ր թէ ուրիշներու պատրաստածն է:

Մէկէն առնելու և մէկային ծախելու արհեստին ի՛նչ կ'ըսենք:

95. ՔՈՒՌԱԿ ՈՒ ՎԱՌԻԿ

Պատկերին մէջ ձիուն քովէն (որո՞ւն) գլուխը կ'երևայ:

Վահանին ետևը (իճ) մը կայ իր (իճերո՞ւն) հետ:

Անոնք գետինը կը փորվրեն, (իճ) կը փնտռեն:

69. ԶԱԳԵՐ

Զի՞րու ձագին կ'ըսենք...: Հաւի ձագին կ'ըսենք...:

Որո՞ւ ձագին կ'ըսենք գառը: Որո՞ւ ձագին կ'ըսենք ուլիկ:

Որո՞ւ ձագին կ'ըսենք հորթ: Որո՞ւ ձագին կ'ըսենք լակոտ:

Գոմէջի ձագին կ'ըսենք ձագ, իսկ իշու ձագին կ'ըսենք...:

Նախիրը նոր էր գիւղ վերադարձեր: Ամենքը խառնուեր էին իրար: Կովը բառաչելով իր (ի՞նչը) կը փնտուէր, գոմէջը իր (ի՞նչը), ոչխարները կը կանչէին իրենց (ի՞նչե՞րը), այծերը իրենց (ի՞նչե՞րը): Իշուն ետևէն կը ցատկաւէր իր խենթուկ (ի՞նչը): Իսկ շունն ու իր (ի՞նչը) մէկ բերան կը հաչէին: Լուռ էր միայն հաւը, իր (ի՞նչե՞րը) հաւաքեր էր էր (ի՞նչե՞րուն) տակը ու կը պատրաստուեր քնանայու:



98. ԶՈՒ, ՃՈՒՏԻԿ, ՅՈՉՈՒՆ


Ո՞վ էր բոյն հիւսեր ծառին վրայ:
Բոյնին մէջը ի՞նչ էր ածեր:
Ի՞նչ ելան այդ չորս ձուերէն:
Ճուտիկները հիմա ինչո՞ւ կը ծւծւան, ի՞նչ կ'ուզեն:

99. ԲՈՅՆ, ՈՐՁ, ՓԵՅԱԿ

Մարդը ի՞նչ կը շինէ մէջը ապրելու համար:
Արջը ինչ կը շինէ մէջը ապրելու համար:
Թռչունը ի՞նչ կը շինէ մէջը ձագուկներ հանելու համար:
Մեղո՞ւն ինչ կը շինէ մէջը փոքրիկներ հանելու համար:

100. ՄԵՂՐ

Մեղուն ո՞ւր կը շինէ իր փեթակը:
Մեղուն իր փեթակին մէջ ծաղիկներու հիւթէն ի՞նչ կը շինէ:
Ան մեղրը որո՞ւն համար կը շինէ:
Ուրիշ ո՞վ շատ կը սիրէ անոր շինած մեղրը:



101. ՔԱՋ ԿՌՈՒՈՂՆԵՐ

Աս (ո՞վ) է: Եկեր է (ի՞նչի՞) մօա, քիթը (ի՞նչի՞) հոտ է ա-
ներ: Ան ալ, մարդու պէս, (ի՞նչը) շատ կը սիրէ:
Թաթը երկնցուցեր էր, որ զարնէ ու քանդէ (ի՞նչը), բայց
մեղունները թող (սո՞ւի՞ն): Անոնք (ուրի՞կ) դուրս եկան և բոլորը
միասին (որո՞ւն) վրայ թափեցան և (ո՞րտեղները) խայթեցին:
Արջը ճարը կտրած՝ ձգեց (ի՞նչը) և (ի՞նչ րաւ):

102. ԵՋՆ ՈՒ ԷՏԸ

Եզն ու էջը կոխւ ըրին: Եզը ըսաւ. — Տես, սուր-սուր
կոտորներ ունիմ, քեզի հարու կու տամ:
Էջը ըսաւ. — Տես, ամուր սմբակներ ունիմ, քեզի կից
կու տամ:

103. ԿԸ ԽԱՄՆԵՄ, ԿԸ ՃԱՆԿԵՄ

(Ինչպէս կ'ըլլայ վերի պատմութիւնը, երբ կոխ ընողներ շունն ու կա-
սուն ըլլան: Գրե՛: Վերնագիրը դի՛ր՝ Շունն ու կասուն:)

104. ՈՎ ԻՆՉՈՎ ԿԸ ԿՌՈՒԻ

Աբլորը կը կտցահարէ: Գայլը...: Չին...: Գոմէջը...: Օձը...:
Արծիւը...: Վազրը...: Կովը...: Մոծակը...: Այծը...: Ծիծեռնակը...:



105. ԱՂՈՒԷՍԸ

(Ո՞վ) յարձակեցաւ (որո՞նց) վրայ ու հատ մը (ի՞նչ քաւ) :
 Հիմա ամուր (ի՞նչ է քե՞տ) իր սուր (ինչե՞տ վր) և արագ (ի՞նչ
 կ'ընէ) : Հասէք, հասէք : Անպիտան աղուէսը, գոյ աղուէսը :

106. ՅԱՐՁԱԿԻԼ

Աղուէսը ինչո՞ւ յարձակեցաւ հաւի վրայ և ինչո՞ւ
 բռնեց տարաւ :

Արջը ինչո՞ւ յարձակեցաւ փեթակի վրայ :

Կատուն ինչո՞ւ կը յարձակի մկան վրայ :

Կենդանիները ինչո՞ւ կը յարձակին ուրիշ կենդանիներու վրայ :

107. ՓԱՆՁԻԼ ՈՒ ԴԻՄԱԴՐԵԼ

Մուկը ի՞նչ կ'ընէ, որ ազատուի, երբ կատուի գայը կ'իմանայ :
 Հաւը ի՞նչ կ'ընէ, որ ազատուի, երբ աղուէսը կը մօտենայ :
 Կովը ի՞նչ քաւ իր հորթուկը պաշտպանելու համար, երբ
 գայը յարձակեցաւ :

Մեղուները իրենց փեթակը պաշտպանելու համար ի՞նչ
 քաւ, փախան թէ՞ դիմադրեցին :


Կենդանիները պաշտպանուելու համար կ'ամ (ի՞նչ կ'ընեն)
 կ'ամ (ի՞նչ) :

Թռչելը և վախկոտները ինչպէ՞ս կը պաշտպանուին :


Ուժովները և քաջերը ինչպէ՞ս կը պաշտպանուին :

Յարձակելուն ու դիմադրելուն մէկ բառով ի՞նչ կ'ըսենք :


108. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ




ն միջատ է, -ը . . . :




-ը թռչուն է, -ը . . . :




-ը որդ է, տառելիք . . . :



Կարմրախայտը է, շերամը . . . :



-ը չորքոտանի է, -ը . . . :



-ը սողուն է, -ը . . . :

Յոպոպ, առիւծ, արծիւ, փիղ, թրթուռ, թիթեռնիկ, օձ, ծիծեռնակ, ձուկ,

109. ՑԱՄԱՔԻ ՎՐԱՆ, ԳԵՏՆԻ ՏԱԿ, ՋՐԻ ՄԷՋ, ՕՐԻ ՄԷՋ

Ո՞ւր կ'ապրին թռչուններն ու թևաւոր միջատները :
 Ո՞ւր կ'ապրին սողունները : Ո՞ւր կ'ապրին ձկները :
 Ո՞ւր կ'ապրին գազաններն ու ընտանի կենդանիները :
 Իսկ ուր կ'ապրի գո՞րտը :

Հասկերը ուրկէ՞ կը բերեն : Յորենը ուրկէ՞ կ'ըստանան : Ալիւրը ինչէ՞ն կը շինեն : Խմորը ինչէ՞ն կը հուսցեն : Հացը ինչէ՞ն կը թխեն :

111. ՅՈՐԵՆ, ԳԱՐԻ, ԿՈՐԵԿ

Յորենէն զատ ուրիշ ի՞նչ բոյսերէ կարելի է հաց թխել : Կորեկը որո՞ւն կու տանք, իբրև կեր : Ձիերո՞ւն ինչ կու տանք : Ձեր երկիրը սիմիւտը կա՞յ (եգիպտացորեն) : Անկէ ալ հաց կը թխեն :

112. ՁԵՌՔԻ ՇԻՆԳ ՄԱՏՆԵՐԸ

Գիտե՞ս ձեռքի հինգ մատներուն անունը : Բուժ, ցուցամատ, միջնամատ, մատնեմատ, ճկոյթ : Ո՞րն է մեր ամենէն պզտիկ մատը : Ո՞րն է ամենէն երկար մատը : Բուժի կողքի մատին ինչո՞ւ կ'ըսենք ցուցամատ : Մատանին սովորաբար ո՞ր մատը կը դնենք : Ձեռքի ամենէն շարժուն ու անջատ մատը ո՞րն է :

113. ՁԵՌՔՈՎ

Կենդանիները քանի՞ ոտք ունին : Ի՞նչ ունինք մենք չորս ոտքի տեղ :

Ինչո՞վ կը շինենք մեր զէնքերը, գործիքները, ամանները, կահ-կարասին :

Ինչո՞վ կը ձևենք ու կը կարենք մեր հագուստները, ձերմակեղէնը, կօշկեղէնը :

Ինչո՞վ կը շինենք մեր տուները, խանութները, եկեղեցին, դպրոցը ու բոլոր շէնքերը :

Ինչո՞վ կը մշակենք մեր արտերը, այգիները, բանջարանոցները :

Ինչո՞վ կը պատրաստենք մեր ուտելիքը, ինչո՞վ կը կրուուկինք, ինչո՞վ կը պաշտպանուկինք, ինչո՞վ կը գրենք, ինչո՞վ կը նկարենք :

Այս բոլորը պիտի ըլլա՞ր, եթէ մենք ալ միւս կենդանիներուն պէս չորս ոտք ունենայինք :



114. ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Ի՞նչ աղուոր բան է նուագելը : Ի՞նչ աղուոր բան է երաժիշտ ըլլալը :

Տեսէք, այս երկու պզտիկներն ալ (ի՞նչ բնել) կը փորձեն : Երկուքով (ի՞նչ են բեր) իրարու դէմ : (Ո՞վ) առեր է ջու-թակ մը, սեղմեր է (ի՞նչի՞ն) տակը, միւս (ի՞նչովը) առեր է աղեղը ու կը քսէ : (Ո՞վ) առեր է փող մը, դրեր է (ի՞նչերո՞ւն) ու թորերուն բոլոր ուժովը (ի՞նչ կ'ընէ) : Ականջ պէտք է, որ դիմանայ :

115. ԵՐԳ ՈՒ ՆՈՒԿ


Դու՞ն ալ նուագը կը սիրե՞ս : Ի՞նչ նուագել սորովի կ'ուզես : Ձայնով կ'երգեն, իսկ գործիքով ի՞նչ կ'ընեն : Երգել գետե՞ս :

116. ՇՈՒԻ, ՍՐԻՆԳ, ՋՈՒՌԱ, ՅՄԲՈՒԿ

Գիւղացի տղաքը սովորաբար ի՞նչ գործիք կը նուագեն : Գիւղը քէֆն ու հարսնիքը ինչո՞վ կ'ընեն : Հովիւը սարերուն վրայ ոչխարը ինչո՞վ կը կանչէ :

117. ԴԱՇՆԱԿ

Իսկ քաղաքացիներու սովորական նուագարանը ո՞րն է : Տեսա՞ծ ես դու՞ն այդ խոշոր գործիքը : Նուագելու տեղը քանի գոյնի մատներ կայ : Նուագելու համար ի՞նչ պիտի ընես այդ մատներուն : Փորձա՞ծ ես :



118. ՀԱՅԵԼԻԻՆ ԱՌՋԵԻԸ

Պատուհանը բաց էր, թռչնակը մտաւ (ս^{ու}):

Նախ թռաւ վեր՝ պահարանի գլուխը, վերջը իջաւ գետին, ետքն ալ ցատկեց (ի^{նչ}ի^ո) վրայ, ուր պատիկ (ի^{նչ}) մը կար դրուած:

Յանկարծ տեսաւ իր պատկերը այդ (ի^{նչ}ի^ո) մէջը:

Նայեցաւ, նայեցաւ ու շատ վախցաւ: Սեղանէն (ի^{նչ} քաւ) ու շիտակ (ս^{ու}րսեղի^ն) դնւրս:

119.

Թռչունը սենեակին մէջ ի^{նչ} կը փնտուէր:

Կենդանիները կը հասկնան, որ հայելիին մէջ տեսածնին իրենց պատկերն է:

Հայելին ինչո՞ւ համար է և որո՞ւ հնարածն է:

Ուրիշ ո՞ւր կարելի է իր պատկերը տեսնել:

120. ԻՆՁԸ ԻՆՁԵՆ Է ԾԻՆԱԾ

Ինչէ՞ն է շինած հայելին ու բաժակը:

Ինչէ՞ն է շինած երեսարբիչն ու անձեռնոցիկը:

Ինչէ՞ն է շինած դանակն ու պատառաքաղը:

Ինչէ՞ն է շինած սուրճի գաւաթներն ու պնակները:

Ինչէ՞ն է շինած անուշի դգալը:

Ինչէ՞ն է շինած խոզանակը:

Ինչէ՞ն է շինած սանրը:

Փայտ, արծաթ, երկաթ, ապակի, յաղջապակի, կաւ, կտաւ, ոսկոր, խոզի մագ:

121. ԿԱՅԵԼԵՂԵՆ

Ինչէ՞ն կը շինեն պանիրը: Ինչէ՞ն կը քաշեն սերը: Ինչէ՞ն կը մերեն մածուներ:

Կարագը ինչէ՞ն կը հանեն: Կարագը ինչի՞ մէջ կը հարեն:

Խնոցին ի^{նչ} պիտի ընենք, որ կարագը հարուի:

Կարագը հանելէն ետքը խնոցիին մէջ ի^{նչ} կը մնայ:

Ո՞րը աւելի կը սիրես, սպիտակ սերը, թէ՞ դեղին կարագը:

Հաց ու պանիր, կեր ու բանիր:

122. ՈՎ ԻՆՁ ԿԸՆԷ

Մենք կաթ կու տանք՝ ըսին (որո՞ճֆ):

Մենք հողը կը վարենք՝ ըսին (որո՞ճֆ):

Հեծուորը մենք կը թոցնենք՝ ըսին (որո՞ճֆ):

Իսկ տունն ու հօտը ես կը պահեմ՝ ըսաւ (ո՞վ):

Սայլը ո՞վ կը քաշէ:

Կառքը ո՞վ կը քաշէ:

Ո՞ր կենդանիները կը կրեն մեր բեռները:

123. Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ

Ժամը քանի՞ն կ'եյնես անկողնէն :
 Ժամը քանի՞ն նախաճաշ կ'ընէք :
 Ժամը քանի՞ն կ'ըսկսուի դպրոցը :
 Ժամը քանի՞ն դպրոցը կ'արձակուի :
 Ժամը քանի՞ն կ'ընէք ընթրիքը :
 Ժամը քանի՞ն կը պառկիս :



124. Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ի Ն Ե Տ Ե Ի Է Ն

(Քանի՞) հոգի էին, (հանի՞) ընկեր : (Ո՞ւր) էին եկեր, (ի՞նչ
 ընելու) :
 (Ինչե՞րու՞ն) մէջ կը վազվզէին, յանկարծ (ի՞նչ) մը տեսան,
 սկսան (ի՞նչ ընել), (ինչո՞ւ) :
 (Ի՞նչ գոյնի) թիթեռնիկ մըն էր, ասդին թռաւ, անդին թռաւ,
 տղաքը լաւ մը յոգնեցուց և վերջը ծառերուն մէջը (ի՞նչ եղաւ) :
 Այո՛, կորաւ ու կորաւ, թէ կրնաս՝ գտիր :

125. Մ Ե Ր Մ Ա Ր Մ Ն Ի Ն Մ Ա Ս Ե Ր Ը

Թիթեռնիկին ետևէն վազելու ատեն տղաքը վար ինկան :
 Մէկը ինկաւ կռնակին վրայ, (ո՞ր տեղերը) ցաւցուց :
 Միւսը ինկաւ երեսի վրայ, (ո՞ր տեղերը) ցաւցուց :
 Երրորդը ինկաւ կողքի վրայ, (ո՞ր տեղերը) ցաւցուց :

Ճակատ, զագաթ, կուրծք, թիկուժք, մէջք, թև, սրուժք, ծունկ, արմուկ :

126. Հ Ո Տ ՈՒ Հ Ա Մ, Ձ ԵՒ ՈՒ Գ Ո Յ Ն, Ձ Ա Յ Ն

Աչքը ինչո՞ւ համար է : Աչքով առարկաներու ի՞նչը կը
 տեսնենք :
 Ականջով ի՞նչ կ'ընենք : Ականջով մարմիններու ի՞նչը կը
 լսենք :
 Ուտելիքներու համը ինչո՞վ կ'առնենք :
 Ծաղիկներու և կերակուրներու ի՞նչը կ'առնենք քթով :

127. Կ Ա Տ Ի Ո Վ Կ Ը Ծ Օ Տ Ա Փ Ե Ն Ք

Ամանի մը տաք կամ սառն ըլլալը ինչո՞վ կ'իմանանք :
 Կերակուրներու տաք կամ սառն ըլլալը ինչո՞վ կ'իմանանք :
 Լողանալու ատեն ջուրի տաք կամ սառն ըլլալը ինչո՞վ
 կ'իմանանք :
 Մեր ամբողջ մարմինը ինչո՞վ է պատած : Սառն ու տաքը
 զգացողը մեր ի՞նչն է :
 Բանի մը փափուկ կամ կոշտ ըլլալը զգացողը մեր ի՞նչն է :
 Մենք ինչո՞վ կը շօշափենք :
 Ամենէն աղէկ շօշափող կաշին մեր ուրտեղն է :

128. Մ Ա Մ Ե Լ, Մ Մ Ե Լ,

Բերնով ի՞նչ կ'ընենք :
 Մեր աղոաները ինչո՞ւ համար են :
 Նոր ծնուած երեխան աղոայ ունի :
 Անոնք ի՞նչ կ'ուտեն : Ծիծը ի՞նչպէս կ'ուտեն :
 Ծծելու ատեն բերնի ո՞ր մասերը աւելի կ'աշխատին :
 Ձին ջուրը ի՞նչպէս կը խմէ : Իսկ շո՞ւնը :

* 129. Ք Ե Ռ Ի Ն

Մեր ընտանիքը հինգ հոգի է : Մամիկս, հօրաքոյրս, մայրիկս, հայրիկս ու ես : Մեծ քոյր մըն ալ ունիմ, բայց ան մեզի հետ չապրիր, կ'ապրի իրենց տունը մեր փեսային հետ : Քոյրիկս պզտիկ աղջիկ մը ունի, անունը Արաքսի : Ես Արաքսին քեռին եմ : Հապա :

130. Մ Ե Ր Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

(Դե՛. քանի՞ հոգի է ձեր ընտանիքը, որո՞մք են, ամեն մեկուն անունը ի՞նչ է :)

131. Պ Ա Ր Ո Ն, Տ Ի Կ Ի Ն, Օ Ր Ի Ո Ր Դ

Մեզի ընտանի չեղող մարդու մը անունը տալու ատեն ի՞նչ կ'ըսենք անունէն առաջ :

Մեզի ընտանի չեղող կնոջ մը անունը տալու ատեն ի՞նչ կ'ըսենք անունէն առաջ :

Մեզի ընտանի չեղող աղջկայ մը անունը տալու ատեն ի՞նչ կ'ըսենք անունէն առաջ :

Ի՞նչպէս կը կանչես քու ուսուցիչդ :

Ինչպէ՞ս կը կանչես քու վարժուհիդ :

132. ՈՐ Տ Ե Ղ Ա Յ Ի Ե Ս

Յակոբը ծնուած է Ալաշկերտ, ալաշկերտցի է, Յովսէփը ծնուած է Տրապիզոն, տրապիզոնցի է : Դ՞նն որտեղ ես ծնուած. որտեղացի ես :

Քու հիմակուան բնակած տեղդ գի՛ւղ է թէ քաղաք :

Ի՞նչ է քու քաղաքիդ կամ գիւղիդ անունը :

133. Ձ Ի, Ե Ձ, ՈՒՂՏ, ՍԱՅԼ, ԿԱՌՔ, ՆԱԻ

Ձեր գիւղէն դուրս ուրիշ գիւղ կամ քաղաք գացած ես : Ինչո՞վ ես գացած :

Ծովու վրայ ինչո՞վ կը ճամբորդեն :

Պզտիկ նաւակները ինչո՞վ կը վարեն :

Քամի եղած ժամանակը նաւերը ինչո՞վ կ'երթան :

Իսկ երկաթուղի ու շոգեխաւ տեսած ես : Իրականը թէ պատկերի մէջ : Շոգեխաւ նստած ես : Իսկ երկաթուղի՞ :



134. ԿՈՂՈՎ ՍԸ ԽԱՂՈՂ ԵՒ ԽՈՇՈՐ ՍԵՆ ՍԸ

Երկու տղայ փողոցը ուր են նստեր և ի՞նչ բանի վրայ են : Մէկը քովը ի՞նչ է գրեր : Այլ ձեռքով ի՞նչ կը տանի բերանը : Խաղողը այդպէս ամբողջ ողկոյզով կ'ուտեն :

Իսկ ընկերը ի՞նչ է գրկեր, ինչո՞վ կը կտրէ շերտ-շերտ. բերանն ալ արդէն ահագին ի՞նչ մը կայ : Ան սեխի պատառները խաճներով կ'ուտէ թէ՞ զանակով կը կտրէ : Կատարեալ փողոցի տղաներ :

135. ՊՏՈՒՂՆԵՐ

Այգիներու, պարտէզներու և բանջարանոցներու մէջ բացի զանազան կանաչեղէններէն ու ծաղիկներէն կը հասնին տեսակ-տեսակ պտուղներ : Կը հասնին խաղող, սալոր, դեղձ տանձ, խնձոր, նուռ, սերկևիլ, թուխ, վարունկ, յունապ, ելակ, փշատ, սեխ, թուզ, ձմերուկ, բալ, ծիրան, կեռաս և շատ ուրիշներ :

Ասոնցմէ գարնան կը հասնին (որո՞ց) :

Ամառը կը հասնին (որո՞ց) :

Աշունը կը հասնին (որո՞ց) :

136. ԾԱՌ, ԹՈՒՓ, ԹԱՂ

Վերի պտուղներէն որո՞նք կը բուսնին ծառի՞ վրայ :

Վերի պտուղներէն որո՞նք կը բուսնին թուփի վրայ :

Վերի պտուղներէն որո՞նք կը բուսնին թաղի վրայ :

Ծառը քանի՞ բուն ունի :

Գետնէն քանի մը բարակ բուներով բարձրացած ծառին ի՞նչ կ'ըսենք :

Թաղը վեր կը բարձրանայ, թէ՞ կը պառկի հողին երեսը :

137. ԱՅԳԻ, ՊԱՐՏԷՋ, ԲԱՆՋԱՐԱՆՈՅ, ԱՐՏ, ԱՐՕՏ

Խաղող ու պտղատու ծառեր տնկուած տեղին կ'ըսենք... :

Պարտէզի մէջ ի՞նչ կընայ ըլլար բացի պտուղներէն :

Բանջարանոցին մէջ կը բուսնին կանաչեղէններ և... :

Հասկերու բուսած տեղին ի՞նչ կ'ըսենք :

Ի՞նչ կ'ըսենք այն հողին, ուր անասուններու սիրած առատ խոտը կը բուսնի :

138. ՇԻՐԱ, ԳԻՆԻ, ՕՂԻ, ՔԱՅԱՆ

Խաղողը եթէ ճմլենք, քամուած հիւթը ի՞նչ կը դառնայ :

Շիրան եթէ մնայ ու եռայ՝ ի՞նչ կը դառնայ :

Գինին եթէ թթուի՝ ի՞նչ կը դառնայ :

Խաղողի չեչէն ի՞նչ կը պատրաստեն :

Խաղողի հիւթը եթէ եփենք՝ ի՞նչ կը դառնայ :

139. ԱՂԻ, ԼԵՂԻ, ԹՅՈՒ, ԿՄՈՒ

Ես չեմ սիրեր սոխ ու ծիծակ. կծու է :

Ես չեմ ուտեր խակ սալորը, ժուռ խաղողը. ինչո՞ւ :

Չեմ ախորժիր չորցած ձուկէն, աղած պանիրէն. ինչո՞ւ :

Ես չեմ սիրեր կանաչ բոխին, վատ վարունգը. ինչո՞ւ :

Տուէք ինձի հասուն պտուղ, շաքարեղէն, մեղր ու չամիչ. առ ուրիշ բան է. ինչո՞ւ :

140. ՀՕՏԱՂԸ

Նախիրը կ'արածէր ձորին բերանը : Հոն խոշոր վայրի տանձի ծառ մը կար : Հօտաղը ելաւ (ո՞ւր), փրցուց բուներով (ի՞նչը) և լեցուց իր (ի՞նչը) :

Հիմա կեցեր է ու (ի՞նչ կընէ) : Ի՞նչ համով են փոքրիկ, թըթ-ուաշ (ի՞նչերը) :

141.

Հօտաղը ինչ կը տանի արածելու : Իսկ հովիւը :

Ոչխար ու այծը ինչ կու տան մեզի :

Բուրդը ինչով կը խուզեն :

Բուրդէն ինչ կը մանեն :

Գուլպան ինչով կը գործեն :

Շալն ու մաշուտը ինչով կը գործեն :

142. ԴԷՄԸ

Վերի պատկերին մէջ (ուրիշ ո՞վ) կայ : Ան իր տիրոջ (ո՞ր կողմն) է նստեր : Անոր սիրտն ալ (ի՞նչ ընել) կ'ուզէ : Բայց տանձն է անոր սիրած ուտելիքը : Շատ ուրախ պիտի ըլլար, եթէ տիրոջ ձեռքինը (ի՞նչ) ըլլար :



ՅՈՒՇԱՐԱՆ

Թառեր, որոնք մէջը Է-ով կը գրուին.

գէր	մէկ	տէր	գումէշ
դէզ	մէգ	սէր	վրէժ
կէս	մէջ	նուէր	տգէտ
կէտ	վէճ	պէս	պէտք
դէմ	վէգ	աղուէս	դէպի
դէմք	շէկ	պարտէզ	վերք

Թառեր, որոնք մէջը օ-ով կը գրուին.

հօտ	եղբօր	աղօթք	ալօս
մօտ	արօր	զօրք	կօշիկ
հօր (հայր)	արօտ	խօսք	հօտաղ
մօր (մայր)	կարօտ	խելօք	դբօշակ
տօն	նարօտ	արդեօք	մօրուք
ցօղ	ծանօթ	եօթը	առաւօտ
քօղ	ծնօտ	գօտի	զբօնեի
լօշ	ամօթ	կրօն	շօշափեի

Թառեր, որոնք սկիզբը յ-ով կը գրուին.

յամառ	յունուար	յիշել	յանցանք
յիմար	յունիս	յաղթել	յանկարծ
յարմար	յուլիս	յարգել	յարկ
յայտնի	յունապ	յոգնիլ	յոյս
յատակ	յոպոպ	յարձակիլ	յստակ
յատուկ	յասմիս	յանդիմանել	յանդուզն



